

եւ ինդիր աւր քան զաւր աճէ ի սիրտս մեր, թէ ընդէ՞ր ոչ այսաւր քան¹ զերեկն եւ զեռանդն ցուցանի գործ յանձինս մեր լաւութեան եւ արարուած բարւոյ,- ի հաւատս յորում եմք՝ խորհել ի սոյն եւ կեալ սովաւ եւ ի միասին² վախճանել: 20 Այլ յաղագս երկրպագութեան արեգականդ որ ասէք, թէ հրաման ետ թագաւորն, զոր թէ յանձն առեալ հաւանիք՝ ասէ, կեայք դուք³ եւ ազատորեարն որ ի կապանս են, եւ եթէ յամառեալ չկամիք առնուլ յանձն՝ եւ դուք մեռանիք եւ զնոսա հրամայեմք սպանանել:- մեզ մի՛ լիցի ուրանալ զճշմարտութիւն եւ ծառայել սուտ անուանելոց աստուածոց, որ ոչ են աստուածք. եւ մերով ուրացութեամբ ումեք ի հաւատացեալ կապելոցն մի՛ լիցի արձակումն եւ ի յաւիտենից անլոյծ կապանսն անկանել. զոր եւ նոքա այժմ առաւել եւս քան զմեզ ինդրեն յԱստուծոյ, զմեր վասն Աստուծոյ զվախճանն, քան թէ զկեալն մեր ուրացութեամբ: 21 Այլ թէ հնար էր ձեզ այժմ գիտել մարգարեութեամբ, թէ ո՞րպէս (վասն) պատգամիդ այդորիկ⁴, զոր բերէք առ մեզ հրամանաւ թագաւորին, թուիք մեզ⁵ անմիտք եւ կորուսեալք, եւ դուք եւ որ զձեզն յղեաց՝ ողորմելի զանձինս ձեր եւ զթագաւորին քան զամենայն թշուառացելոց ի մարդկանէ հաշուէիք: 22 Բայց զոր ինչ կամիք՝ արարէք վաղ, եւ կամ երբ կամիք»:

23 Եւ ասացեալ զայս սրբոյ կաթողիկոսին Յովսէփայ՝ սրտմտեալ զայրացաւ Վեհդենշապուհ եւ որք ընդ նմա հաւատարիմքն էին, եւ հրաման ետ սրբոյն Սահակայ ասել ցնա. «Չի թեպետ եւ թուին մեզ ծանր թշնամանքդ, որով թշնամանեալ ասացեր զմեզ անմիտս եւ կորուսեալս, սակայն առ համարձակապէսն յանդգնութեամբն, զոր իշխեցեր յաստուածանման թագաւորն ասել բանս անարժանս՝ իբրեւ զոչինչ⁶ թուին ի մեզ կողմն թշնամանքդ մեր անձանց եւ թեթեւութիւն: 24 Բայց դու գիտեա՞⁷, զի քեզն զկորուստ անձինդ ինդրեցեր եւ առեր, եւ կեալ քեզ այսուհետեւ անհնար է. սակայն պարտ է մեզ եւ զիւրաքանչիւր զայլոց գիտել զկամս եւ զընտրողութիւն, վասն զի աւրենք մեր այսպէս⁸ ասեն»:

52. Եւ հրամայեաց սրբոյն Սահակայ ասել ցնոսա, թէ «Մի՛ անսայք անմիտ բանից դորա, եւ զանձինս ձեր յայդպիսի⁹ խաւ խրատուէ ի բա՛ց կալայք եւ մարդկաբար զկեանս ընտրեցէք քան զմահ: 2 Եւ դա որ ինքն այժմ

1 2. քան թէ

2 Թերեւս՝ եւ ի սմին

3 Ատ. եկայք դուք

4 2Ատ. թէ որպէս պատգամիդ այդորիկ. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

5 2Ատ. թուիք զմեզ. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

6 ԲԳտ. իբրեւ ոչինչ

7 ՏՏ. գիտես. 2. գիտեայ

8 2. այդպէս

9 2. այդպիսի